

ՀԱՅԳԵՆԵԱՏ ՀՆՈՒԹԻՒՆ ԵՆԵՐԻՑ.

Պարալէմ գիւղը շինուած է Ախլաքալակայ ա-
րեւելա—Հիւսիսային կողմի գեղեցիկ դաշտավայրի
մէջ տեղ, 20ից աւելի գիւղերի կենդրոնատեղում.
նորա միջից անց կենում է մի վտակ ուղղելով
ընդարձակ դաշտը. բնակիչները կը լինին մինչև
ութսուն տուն ըստ նոր աշխարհագրութեան, ու-
րից երկու մասը Հայիր են, իսկ մի մասը Արա-
ցիներ, իւրաքանչիւրն ևս սոցանից ունին խրեանց
եկեղեցի: Այս գիւղում բացուած է տէրութեան
հրամանով և ծախսով մի շինական ուսումնա-
րան, որոյ մէջ ուսանում են երեսունից աւելի
գիւղացի աշակերտներ մի ուսուցչի միջնորդու-
թեամբ: Շինական դատարանն ևս գիւղի անու-
նով հիմնուած է այս տեղ: Այս գիւղը ինչպէս
երևում է գիւղի հիւսիսային կողմում գտնուած
ընդարձակ գերեզմանատանից, Հայոց հին և մեծ
գիւղ է եղած. այս գերեզմանատանը կ'աջոյա-
կապ՝ բայց քայքայուած մեծ մասամբ՝ մի մա-
տուռ, որոյ զրան քարերի վերայ գրուած է Հա-
յոց գրերով, բայց ինձ անվերջանելի եղաւ մա-
շուած լինելու պատճառով. որոնելով և քննե-
լով մի առ մի այդ գերեզմանատան քարերը, մա-
տուռի հարաւային կողմը՝ կիսից շատ գետնի մէջ
կանգուն թաղուած քարի մը վերայ գտայ գրեր,
որից դժուարութեամբ կարդացի հետեւեալ բա-
ռերը միայն. «Սուրբ Նշան Տէրունական արեամբ
ներկեալ պատուական Բարսեղ քահանայիս լեր քա-
ւարան և Յակոբ իրիցոս լեր աղնական»:

Այս գիւղում ևս բազմ ունեցայ տեսնել մի
աղքատ Հայի տան անկիւնում ազգային հնու-
թիւններից մի նշանաւոր գանձ, որոյ մասին առա-
ջին անգամ տեսնելու հաղորդել էի հարեանցի
Մշակի խմբագրութեանը:

Այդ գանձը մի ոսկեզօծ արծաթեայ տուփ է,
որը շինել է տուած մեր Հայոց թագաւոր Հե-
թումը և նորա մէջ ամփոփել քրիստոնէիցս պար-
ծանք չորս խնկելի սրբոց—Ստեփաննոս Նախապ-
կայի, Գալոբ Մծնայ Հայրապետի, Պանդալէոն
Բժշկի և Նիկողայոս Աբանչեկազործի յարգելի
սուրբ մասունքը:

Այս տուփը բաւականին ճարտար ձեռքի գործ
է, ինչպէս նկատեցի այս երկրորդ անգամին. մե-
ծութիւնը կը լինի մի քառակուսի վերջքից աւե-
լի. մի երեսի վերայ քանդակուած է խաչելու
թեան պատկերը, իսկ միւս երեսում պարզ և ըն-
թիւրցանելի տառերով գրուած է այս բանը. «Ես
«Հեթում Թագաւոր Հայոց թագում աշխատութեամբ
«ժողովեալ զմասունս սրբոցն Ստեփաննոսի Նախա-
«պկային, Գալոբայ Մծնայ Հայրապետին, Պանդա-
«լիոնի Բժշկին և Նիկողայոսի Աբանչեկազործին
«ետու շինել զտուփս զայս ի պահպանութիւն հոգ-
«ւոյ և մարմնոյ»

Այս բառերից յետոյ մի տող ևս կ'մնար 'կարդալու,
բայց մեր բարի տանուտէրը «շատ մի՛ աշեր»,
(մոտիկ տալ) ասելով խեց առջեկցա տուփը և
կամենում էր փաթաթել ահագին փաթոյթների
մէջը *), բայց իմ շատ ու շատ աղաչանքին և
համոզական խօսքերին զիջանելով հազիւ բարե-
հաճեցաւ առւիթի մի կողմը բանալ, որոյ մէջ ե-
րևում էր մի գեղեցիկ խաչ զարդարուած մի քա-
նի մեծահատ մարգարիտներով և փոքրիկ քարե-
րով, որք ինձ անծանօթ երևեցան՝ թէ ինչ քա-
րեր էին: Խաչը ոսկէզոյն էր, բայց իսկ ոսկի՞ էր,
թէ ոսկէզօծած արծաթ, ինձ յայտնի չեղաւ:
Խաչը տուփի մէջ այնպէս էր զետեղուած, որ
տեղից չէր շարժուում. նորա միւս կողմը տեսնե-
լու համար՝ տուփը միւս կողմից ևս բացվում էր,
բայց մեր այդ նախապաշարեալ և կասկածոտ տա-
նուտէրը, որը միայն տուփի երեսը ցոյց տալու
համար քսան անգամից աւելի առաջ էր բերում՝
և յետ տանում, ամենեւին չը համաձայնեցաւ
բաց անելու և միւս կողմը տուփի, միայն բերա-
նացի այսքան ասաց թէ՛ միւս կողմը բաց անելիս
տեսնուում է սրբոց մասունքը զոյն զոյն ապակի-

(*) Ահագին փաթոյթների մէջ եմ տեսնում, որովհետեւ զի-
ղացի ուխտաւորները ինչքան որ աղքատներ և այլ շրջիցէն փա-
թոյթներ ընծայ են բերած, բոլորը նորա վերայ են փաթա-
թած, առանց բացառութեան, որով դարձել է տուփը մի ա-
հագին գունտ, հանուտէրը պատմեց թէ մի երկու անգամ
հարկաւորել է նորանից վեր տանել մի աղուի մատուցի վե-
րայից, իսկայն նորա հետեւեալ գիշերը վառուել է բոլորը. դո-
րա համար այլ ևս չեն համարձակուած նորա ընծաներից վեր
առնել:

ների վերայից, բայց հրաման չկայ ուրիշների ցոյց տալ. ես շատ խնդրեցի զոնէ մի անգամ թողնել լրիւ կարգալու յիշատակարանը, բայց չը համաձայնեց: Այս տուփից ի բաց կայ այս տանը և մի խաչ, որոյ համար պատմում են, թէ այն ևս Հեթոմի վրի խաչն է, որը իւր ձեւակերպութեամբ հաւանական է երևում: Այս խաչը չկարողացայ զիտնալ թէ իսկ ի՞նչ նիւթից էր, փոքր ինչ երևում էր թէ քարերի տեսակից լինելու էր:

Շատ լաւ կը լինէր, եթէ մեր ազգասէր Վեհափառ Հայրը ուշադրութիւն դարձնելով սորա վերայ, բարեհաճէր հրամայել մի եկեղեցու զուամարից բաւականութիւն տալ դորա տիրոջ և այդ գանձը ձեռք բերելով զետեղել տար մի յարմարաւոր եկեղեցում, որով դառնալով դա մի հրաշակաւոր ուխտատեղի՝ իւր արդիւնքով կը կառավարէր Վեհափառ Հօր բաղձանքի համաձայն մի ուսումնարան տեղւոյս զիւղերի ուսումնականարօտ մանուկների համար:

ԿԱՐԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍԵԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

ՅԱՍՏԻՆԻՆԵՍ.

Հեռեկալը ուրախութեամբ կ'հրատարակուիք ի խրախոյս նամակագիր աշակերտուհեաց:

ԽՔԻՖԻՆ-ԼԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՏԱՔԻՐՈՅ.

Մէք Աստրախանայ Օրիորդական Հոգեւոր Գըպրոցի մէջ 1870 թուականէն ուսանում ենք Կրօնագիտութիւն, Հայոց լեզու և պատմութիւն, Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Չեռնագործութիւն և Երգեցողութիւն, բարեջան Հոգաբարձուաց և աշխատասէր Ուսուցչաց և Ուսուցչուհւոյ խնամոց ներքոյ, և լսելով թէ մեր խնամակալներից և թէ մարթանայոյ չափ կարգալով երբեմն մայրենի լեզուով լրացրերը և ամազգրերի յօդուածներ՝ պատկերացնում ենք մեր մտածող սրտի առաջը լուսաւոր ազգերի իգական սեռի երջանկութիւնը, իսկ Հայ կնոջ ժառանգական ստրկութիւնը, որոյ համար չէ ծնուած նա:

Մէք ևս մեզ շրջապատող հանգամանքներէն ստիպուած՝ թէպէտ թոյլ գրկախառնած ենք այդ ժառանգութիւնը, սակայն կրթութեան օրի մէջ շունչ առնելով՝ սակաւ առ սակաւ մեր մտաց հորիզոնական խաւարի վարագոյրը յետ ենք քարշում, և հասկանում ենք որ զալոց սերունդի համար արժանաւոր մայրեր պէտք է լինենք, վասն որոյ և ուսումը աւելի ակտիւ է երևում մեր սրտի ու մտքի ծաշակին: Բայց երբեմն խիստ ցաւում ենք, երբ մտաւորական աչօք տեսնում ենք, որ մեզ պէս անկարող անձանց զաւակներ և ո՛չ կատարեալ սւսմամբ զարգացող մշակներ՝ անկարող են ներկայ դարու պահանջների համար հերկագործել մարդկային ազգի մնաց անդերը առատ հունձեր բուսցնելու, նա մանաւանդ մտաւորապէս յաղթող հանդիսանալու մեզ շրջապատող անոյս խումբի մէջ: Յոյժ բարեբաղդ կ'լինէինք եթէ մեր համազգի օրիորդները՝ որ հարազատ քոյրեր են մեզ, ընկերանային մեզ հետ ուսանելու, և Հայ Հասարակութիւնը Աստրախանայ ուշք դարձնէր զոնէ իգական սեռի լուսաւորութեանը, պատճառ՝ դիտութեանց ազդու քարոզն է որ ասում է՝ «տուէք մեզ հանճարաւոր մայրեր, և մէք կտանք ձեզ բարեկիրթ անձինք, Թէպէտ մէք ցաւում ենք՝ որ չենք կարող հասանել մի բարձր կրթութեան, և մտաւոր վերին աստիճանի զարգացման, որով կարողանայինք մեր բազմակարօտ ազգի շատ և ամենակարեւոր պէտքերին արժանի սպասաւոր լինել, սակայն ուրախ ենք, և երջանիկ ենք մեզ համարում մեր նախորդներից, որ զործել կարող ենք ժամանակին և բոլորովին յետ չենք մնալ. յուսով ենք, կրկնում ենք, որ մեր համոզմունքը անխափ է, բայց թող ներուի մեզ մեր մտաւոր թերութիւններումը՝ մեզ շրջապատող հանգամանքներին ծանօթանալով, որոնց մէջ մէք՝ ինչպէս մեր նախորդները, ծնած ենք, զարգանում ենք և ապրում, որոնցից՝ իբրեւ խաւար շոշափող կեանքերից, չենք կարող իսպառ փրկվել: Հրապարակական շնորհակալութեան արժանի են մեր հայրախնամ Հոգաբարձուքը և ժրջան ուսուցիչները և համեստափայլ տեսչուհին, որք մեր խոպանացած մտքի անդերը ազդու խրատների առօրնեւով հերկագործելով